Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

08.04.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 07.04.2015թ.-ի թիվ 48 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունում անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի և գլխավոր մասնագետ՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց վարչության պետ՝ Ն.Սիմոնյանը:

Նախնական տվյալներ.

Վարչությունը կազմված է տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերով և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման խմբերից: Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերով խմբում ընդգրկված են վարչության պետի տեղակալը և 1 գլխավոր մասնագետ: Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման խմբում ընդգրկված է 1 առաջատար մասնագետ: Վարչությունը ղեկավարում է վարչության պետը: Վարչությունն ունի վարչության կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Վարչության պետը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում՝ վարչության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Վարչության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

• Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը և ներքին աուդիտոր՝ Հ.Ավետիսանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված է Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման կարգը: Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում իրականացնում է կառավարության տարածքային քաղաքականությունը՝ Մարզում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունության համակարգման միջոցով, որն իր մեջ ընդգրկում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ համաձայնեցված գործունեության կազմակերպումը /1.3 կետ/:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքներով և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ գործունության համակարգման, մարզպետին վերապահված լիազորությունները վարչության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ վարչության կանոնադրությամբ և վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտոր՝ Հ. Ավետիսյան

ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ Ն. Սիմոնյան